ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2021/329

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Մասնակից՝ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23» գնանշման հարցում, շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.12.2021թ.-ի թիվ 26/26-1/19711-2021 գրությամբ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարության 25.11.2021թ.-ի թիվ 19.2/38661-2021 գրության հիման վրա, 01.12.2021թ.-ին «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

02.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/329 համարի ծածկագիրը:

09.12.2021թ.-ին և 17.12.2021թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.12.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ արդարադատության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ արդարադատության նախարարությունը 25.11.2021թ.-ի թիվ 19.2/38661-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«ՀՀ արդարադատության նախարարությունը 2021 թվականի հունիսի 17-ին թիվ ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1 ծածկագրով հայտարարած գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի արդյունում 2021 թվականի հուլիսի 09-ին «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ կնքել է շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման թիվ ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1 պայմանագիր:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 4 355 000 (չորս միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, որից 725 833 (յոթ հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Պայմանագրի թիվ 2 Հավելված օրացուցային գրաֆիկի համաձայն «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավորվել է մինչև 2021 թվականի օգոստոսի 09-ը ավարտել նորոգման աշխատանքները:

2021 թվականի օգոստոսի 26-ին կազմվել է 1 169 340 (մեկ միլիոն հարյուր վաթսունինը հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամի կատարված նորոգման աշխատանքների վերաբերյալ համապատասխան արձանագրություն: Արձանագրությունը կազմելուց հետո «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն առ այսօր չի ավարտել նորոգման աշխատանքները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. Թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը պայմանագրով նախատեսված պայմանները ամբողջությամբ չկատարելու հիմքով մասնակի միակողմանի լուծել է 2021 թվականի հուլիսի 09-ին կնքված թիվ ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1 ծածկագրով Պայմանագիրը 3 185 660 (երեք միլիոն հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ դիմում եմ Ձեզ «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գործընթաց նախաձեռնելու նպատակով, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա/ ենթակետի:

Գրությանը կից Ձեզ եմ ներկայացնում ընթացակարգի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, հայտարարությունները, Մասնակցի կողմից ներկայացված հայտը, թիվ ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1 պայմանագիրը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը և ծանուցումը տեղեկագրում հրապարակելու վերաբերյալ ապացույցը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.12.2021թ.-ի գրությամբ դիմել է «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.12.2021թ.-ի թիվ

26/26-1/19711-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/329 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 09.07.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) Հավելված 1-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Կապան համայնքի Բաղաբուրջի հուշահամալիրի մասնակի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

iii. Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրի Հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

iv. Պայմանագրի Հավելված 2-ով սահմանված շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական

աշխատանքների կատարման սկիզբ է համարվում պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ ավարտը՝ 30 օրացուցային օրվա ընթացքում:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 22.11.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 22.11.2021թ.-ի ծանուցման համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության և «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի միջև շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների համար 2021 թվականի հուլիսի 09-ին կնքված թիվ «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Հավելվածի՝ Կատարողը պարտավոր էր կատարել ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 4 355 000 (չորս միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, որից 725 833 (յոթ հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Պայմանագրի թիվ 2 Հավելված օրացուցային գրաֆիկի համաձայն «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվել է մինչև 2021 թվականի օգոստոսի 09-ը ավարտել նորոգման աշխատանքները:

2021 թվականի օգոստոսի 26-ին կազմվել է 1 169 340 (մեկ միլիոն հարյուր վաթսունինը հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամի կատարված նորոգման աշխատանքների վերաբերյալ համապատասխան արձանագրություն: Արձանագրությունը կազմելուց հետո «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ն առ այսօր չի ավարտել նորոգման աշխատանքները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ Պատվիրատուն ստիպված է պայմանագրով նախատեսված պայմանները ամբողջությամբ չկատարելու հիմքով մասնակի միակողմանի լուծել 2021 թվականի հուլիսի 09-ին կնքված թիվ «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1» ծածկագրով Պայմանագիրը 3 185 660 (երեք միլիոն հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով և գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված որակավորման և պայմանագրի ապահովման գումարները:

ՀՀ արդարադատության նախարարությունը նաև նախաձեռնում է Կատարողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու գործընթաց՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի «ա» ենթակետի:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.12.2021թ. թիվ 26/26-1/19711-2021 գրությամբ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության և «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 09.07.2021թ.-ին կնքված թիվ «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Կապան համայնքի Բաղաբուրջի հուշահամալիրի մասնակի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն

պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրի Հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2): Պայմանագրի Հավելված 2-ով սահմանված շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման սկիզբ է համարվում պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ ավարտը՝ 30 օրացուցային օրվա ընթացքում:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 22.11.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 22.11.2021թ.-ի ծանուցման համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության և «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի միջև շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների համար 2021 թվականի հուլիսի 09-ին կնքված թիվ «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Հավելվածի՝ Կատարողը պարտավոր էր կատարել ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 4 355 000 (չորս միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, որից 725 833 (յոթ հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Պայմանագրի թիվ 2 Հավելված օրացուցային գրաֆիկի համաձայն «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվել է մինչև 2021 թվականի օգոստոսի 09-ը ավարտել նորոգման աշխատանքները:

2021 թվականի օգոստոսի 26-ին կազմվել է 1 169 340 (մեկ միլիոն հարյուր վաթսունինը հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամի կատարված նորոգման աշխատանքների վերաբերյալ համապատասխան արձանագրություն: Արձանագրությունը կազմելուց հետո «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ն առ այսօր չի ավարտել նորոգման աշխատանքները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ

ենթակետը՝ Պատվիրատուն ստիպված է պայմանագրով նախատեսված պայմանները ամբողջությամբ չկատարելու հիմքով մասնակի միակողմանի լուծել 2021 թվականի հուլիսի 09-ին կնքված թիվ «ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/23-1» ծածկագրով Պայմանագիրը 3 185 660 (երեք միլիոն հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով և գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված որակավորման և պայմանագրի ապահովման գումարները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 22.11.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքը Հավելված 2-ով՝ օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետում չի կատարվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն

հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.12.2021թ. թիվ 26/26-1/19711-2021 գրությամբ «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/329 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արմինժ Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**